

ՍԻՎՐԻ-ՀԻՍԱՐԻ ԳԱՂԹՕՋԱԽԻ ԵՎ ԲԱՐԲԱՌԻ ՄԱՍԻՆ

Ն. Ա. ՄԿՐՏՁՅԱՆ

Երկու անկախ հարցեր միավորված են այստեղ գիտակցաբար. ե՞րբ է ստեղծվել հայկական գաղթօջախ Սիվրի-Հիսարում, և արդյո՞ք բարբառը կրողների օգնությամբ հնարավոր է պարզել Պատմական Հայաստանի որ տարածքից նրանց լինելը: Այսինքն՝ լեզվաբանությունն ի սպաս դնել պատմությանը: Հ. Աճառյանը, քննելով Հայաստանից դուրս գտնվող հայկական գաղթօջախների բարբառները, հետևյալ եզրահանգումն է կատարում. «Մենք չգիտենք, թե մեր որ գաղութը Հայաստանի որ գավառից դուրս եկավ. միայն գիտենք, որ այսօրվա մեր ոչ մի արտաքին բարբառ ոչ մի ներքին բարբառի հետ ամբողջապես նույնը չէ... Սերաստիայի հայությունը Վանից է գաղթած 1021 թվին. նոր Զուզան Հին Զուզայից է գաղթած 1605—1606 թվին. Ռոդոսթոյի հայերը գաղթել են Կամախից 1606—7 թվերին. Պուրտուր և էօ-աէմիշ գաղթել են Ղարաբաղից ժէ դարում կամ ավելի ուշ. Պուսի հայոց ստվար մի մասը Խրիմից է գաղթեցրած 1475 թ.»¹:

Ուրեմն որևէ բարբառ, իր պատմական տարածաշրջանից տեղահանվելով և հայտնվելով նոր միջավայրում, այլևայլ լեզուների կամ բարբառների հարեանությամբ ձեռք է բերում նոր ձևաբանական, հնչյունաբանական հատկանիշներ, սակայն իսպառ չկորցնելով նաև սեփականը:

Այս իսկ առումով էլ արդարանում է մեր հարցադրումը՝ լեզվաբանական տվյալների օգնությամբ պատմությունը վերականգնելու հնարավորության վերաբերյալ: Նման նպատակ իհարկե իրենց առջև չեն ունեցել «Պատմագիրք Սիվրի-Հիսարի հայոց» գրքի կազմողները² և ոչ էլ մենք, որ մասնակցել ենք այդ գրքի հրատարակությանը «Ներածություն Սիվրի-Հիսարի բարբառի» փորձիկ հոդվածով³: Մեզ հանձնարարված է եղել մեկ մամուլի սահմաններում տալ Սիվրի-Հիսարի բարբառի համառոտ նկարագրությունը, և այսքանը միայն: Կազմողների նպատակն է եղել Եղեռնի հիսունամյա տարելիցի կապակցությամբ կորուսյալ ծննդավայրի հիշատակների վերաբերյալ մի հուշամատյան թողնելը և ոչ գիտական ուսումնասիրություն կատարելը: Ուստի մենք նպատակ ենք դրել ներկա ուսումնասիրության մեջ փորձել պատասխանել արծարծված հարցերին, մանավանդ որ դրանց մասին եղած կարծիքները իրարամբոժ են ու առկախ:

Սիվրի-Հիսարի հայ գաղթօջախի վերաբերյալ առաջին վկայությանը հանդիպում ենք Սիմեոն Դպիր Լեհացու 1607—1618 թթ. ուղեգրությունների մեջ⁴: Երկրորդ վկայությանը հանդիպում ենք Պողոս Վարդապետ Նաթանյանի «Տեղեկագրութիւն Սիվրի-Հիսարու» (Տեղեկագրութիւն ընդհանուր վիճակին Գաղատիոյ) գրքույկում⁵: Գրքույկում բերված են նաև մի քանի անհաս-

1 Հ. Աճառյան. Հայոց լեզվի պատմություն. 2-րդ մաս, Երևան, 1951, էջ 437—438 (այսուհետև՝ ՀԼՊ):

2 Պատմագիրք Սիվրի-Հիսարի հայոց. Պեյրութ, 1965 (այսուհետև՝ ՊՍՀ):

3 ՊՍՀ, էջ 451—474:

4 Սիմեոն Դպիր Լեհացույ Ուղեգրութիւն, տարեգրութիւն և յիշատակարանք. Վիեննա, 1936, էջ 333, նույնը՝ ՊՍՀ, էջ 37:

5 Ն ա թ ա ն ե ս ն Պ ո ղ ո ս վ ա ր դ ա պ ե տ. Տեղեկագրութիւն Սիվրի-Հիսարու. Կ. Պոլիս, 1872, նույնը՝ ՊՍՀ, էջ 94—105:

կանալի բառեր: Երրորդ վկայությունը 1881 թ. «Մասիսում» հրապարակված հաշատուր Ուղուրիկյանի Տեղեկագրությունն է՝ Այնուհետև լույս են ընծայվում ևս մի քանի շահեկան հոգվածներ՝ նվիրված սիվրիհիսարցի կնոջ կերպարին, բարբառին և ազգագրությանը «Բյուրակն», «Մասիս» և այլ պարբերականներում:

Բնական է, որ այս գաղութը գոյություն է ունեցել ավելի վաղ, քան նրա մասին հիշատակվել է գրականության մեջ: Սակայն ո՞ր դարը և կամ ո՞ր թվականը պիտի համարել գաղութի հիմնադրման սկիզբը, դժվար է անսխալ պատասխան գտնել: Իրենց՝ սիվրիհիսարցիների բանավոր ավանդությունները իրարամերժ են. ոմանք գտնում են, որ իրենք անեցինք են, ոմանք էլ՝ արևելահայեր (Պարսկաստանից, Գանձակից, Ջուղայից, Ղարսաբաղից և այլն): Ա. Ալպոյաճյանը ենթադրում է, որ ի թիվս հարևան գաղթօջախների Սիվրի-Հիսարը նույնպես հիմնադրված կարող է լինել XIV—XV դդ. «...ԺԴ գարուն վերջին քառորդին մինչև ԺԵ դարուն առաջին քառորդին վերջերը (1387—1425) բազմաթիվ պարսկահայեր՝ մասնավորաբար Ագուլացի, Ցղնացի, Երևանցի, Նախիջևանցի, Ջուղայցի եկան և հաստատվեցան նախապես հայաբնակ Անկյուրիա, Մուրադլա, Քայապազար, Ագ Շահիր և շրջակա քաղաքները»⁶: Հայտնի է, թե ինչ աղբյուրների հիման վրա է Ա. Ալպոյաճյանը նախապես հայաբնակ համարում վերոհիշյալ բնակավայրերը, սակայն ընդգծել է ուզում այն իրողությունը, որ դրանք գոյություն են ունեցել ավելի վաղ, քան այս գաղթականների ալիքն է եկել: Ա. Ալպոյաճյանի նշած արեւ-վելյան Հայաստանի հիշյալ վայրերը (Ագուլիս, Ջուղա, Երևան, Նախիջևան, Թերևս նաև Ցղնա) անխտիր եղել են ում ճյուղի բարբառների տարածքներ, սակայն հանգրվանելով Արևմտյան Անատոլիայում կորցրել են իրենց ում ճյուղի բարբառային հատկանիշները: Բայց չէ՞ որ բազմաթիվ այլ արևելյան կամ ում ճյուղի բարբառներ, որպիսիք են՝ Բուրդուրը, Օղեմիշը, Սպարթան, Անթալյան, Քերք-Աղաջը, Դենիզլին, էլմալին, էրէյին, Նազիրլին և Դուզեն պահպանել էին իրենց դարաբաղյան բարբառները: Մինչդեռ Ա. Ալպոյաճյանը չեն հիշատակած գաղթօջախներից ոչ մեկը, այդ թվում նաև Սիվրի-Հիսարը, չեն պահպանել իրենց ում ճյուղի ձևաբանական հատկանիշը: Ուրեմն՝ նոր միջավայրում մենք հանդիպում ենք և բարբառն անխաթար պահպանած, հատկանիշներից քիչ բան կորցրած բարբառների, որպիսին Բուրդուրն է, և լրիվ ճյուղային պատկանելությունը կորցրած բարբառների, որպիսին Սեբաստիան է կամ Սիվրի-Հիսարը և այլն:

Հետևաբար՝ այստեղ կարելի է ենթադրել, որ լսողների վրա սիվրիհիսարցիների լեզուն միայն առաջին հայացքից է «արևելյան» բարբառի տպավորություն թողել, ինչպես Պ. Նաթանյանն է արձանագրում. «Տեղվույն հայ բնակիչներու և կանա՛ց խոսակցություններեն հասկըցա, որ Սիվրի-Հիսարու բնակիչ հայերը Պարսկաստանի կողմէրեն են: Ասոնք Հին Ջուղայի կողմերեն շուրս կամ հինգ հարյուր տարվան գաղթական կ'երևնան: ...Տեմիր-Գաբուի պատերազմի ժամանակ սաստիկ նեղվելով, շատերը այս պատհառով գաղթած են, ումնք ալ գերությունն փախչելով այս տեղերը ապաստանած են»¹⁰:

Մեր կարծիքով, այս գաղթականները երկրորդ կամ երրորդ համալրումներն են եղել և ոչ բուն գաղթօջախները հիմնադրողները, քանի որ որևէ բարբառ միատարր լինելու դեպքում, կարողանում է շատ երկար պահպանել իր հատկանիշները՝ իհարկե շրջապատից վերցնելով նաև որոշ քանակի բառեր, ոճեր և այլն: Գալով սիվրիհիսարցիների բարբառին, Պ. Նաթանյանը այն հա-

⁶ Կաշատուր Ուղուրիկյան. Տեղեկագրություն. «Մասիս», 1881, 2863, նույնը՝ ՊՍՀ, էջ 143—152:

⁷ Տես «Բյուրակն», 1898, էջ 822—823, 1899, էջ 278, 427, 799:

⁸ Ա. Ալպոյաճյան. Պատմություն Սիվրիհիսարցի հայոց. Գահիրե, 1956, էջ 1387:

⁹ Կ. Մկրտչյան. Բուրդուրի բարբառը. Երևան, 1971, էջ 7—8, 20—21:

¹⁰ ՊՍՀ, էջ 99:

մարում է օտար լեզվի աստիճանի անհասկանալի. «Թեպետ իրենց մայրենի լեզունին շեն կորսնցուցած և միշտ հայերեն կր խոսին, բայց աղավաղյալ է և շատ բառեր կան, որ խոսած ժամանակնին չի հասկցվիր, ուստի արժան դասեցի մեկ քանին հոս հիշելու, որք են՝ կելեհեն (րսե, խոսե), առվակ (գեղեցիկ), խոցծի (սուտ, սնալ), շեկ (երեք), տոպիեաժ (նշանած), իփիս (ինչպես), ասոնց նման բառեր շատ կան, խոսելու ատենին լսողը կը կարծե, թե օտար լեզվավ կր խոսին»¹¹:

Խ. Ուղուրիկյանը, ի տարբերություն Պ. Նաթոնյանի, կարծում է, որ այս գաղութը հիմնադրվել է նույնիսկ բյուզանդական շրջանից առաջ. «...Հայ ժողովուրդը նույն իսկ բյուզանդական շրջանեն առաջ փոյուզացիներու հետ եղած է բնիկը այս շրջաններու մեջ, որ առավել թվով բազմացած բյուզանդական պետության հիմնադրումի շրջանին...»¹²: Բարբառի ծագման մասին նա նույնպես չի կասկածում, որ «արևելահայերեն» է. «Տեմիր-Գաբուի, ինչպես և Կիրիկիո մեջ ստեղծված կացության բերումով ֆաղափին մեջ հաստատված հայ կառավարը կը խոսի արևելահայերենը»¹³:

Իհարկե «արևելահայերեն» շատ ընդհանուր է, սակայն նրա նկատմամբ և մատնացույց արած բայական սիստեմի տարբերությունները կը խմբակցության բարբառներից խիստ արժեքավոր ուղեցույց են. «Արևելահայերենի մեջ բոլոր բայերու ապառնի եղանակը պիտի նախադաս մասնիկը չունին, օրինակ՝ կարդալու եմ, երգելու եմ, ըլլալու է և այլն, ժամանակի ընթացքին ձևափոխումի ենթարկուած է. ապառնի ընդունելության հատուկ ու մասնիկը հապաված և լ ղիւրը ավելցնելով կը կազմեն ապառնի ժամանակը, այսպես՝ կարդալլ եմ, երգելլ եմ, ըլլալլ է. ոչ նվազ խժալուր աղավաղումի ենթարկված է տեղական մակբայը (իմա՝ ցուցական դերանունները)՝ հոն-նախը, հոս-տախը, այդ տեղ-տախը տատեղ, այսպես-ասանկ (այսունակ)-ատծը-նակ, այնպես, անանկ, այնսունակ-անձնակ, այստեղ-տատեղ, այնտեղ-նատեղ, այն տեղ-նախը, նատեղ, այս ձև, այս կերպ-տահանձնակ, այն ձև, այն կերպ-նահանձնակ»¹⁴:

Այս յուրահատուկ բարբառի նկատմամբ հետաքրքրությունը չի դադարում և հետագայում. «Բյուրակն» հանդեսում հրապարակվում է 170 բառերից կազմված մի բառացանկ Սեբովբե Վարժապետյանի կողմից¹⁵, իսկ Հ. Աճառյանի հրատարակած «Գավառական բառարանում» Սիվրի-Հիսարի բարբառից բերված բառերի թիվը արդեն 555-է¹⁶: Այնուամենայնիվ այս հրապարակված նյութերի հիման վրա բարբառի հնչյունաբանական և ձևաբանական հատկանիշների մասին գաղափար կազմելը չէր կարող անվերապ լինել՝ տեքստերի և տառադարձության ոչ գիտական լինելու պատճառով: Եվ ահա չի ուշանում եզրակացությունը Սիվրի-Հիսարի բարբառի «կիրիկյան» խմբակցությանը, պատկանելու վերաբերյալ, որի հեղինակը Հ. Աճառյանն էր. «Հայտնի է, թե Կիրիկիայի արևմտյան մասեն սկսյալ մինչև Ջմյուռնիո և Նիկոմիդիո սահմանը հայերեն լեզու չկա. տեղական լեզուն՝ թուրքերենը, դարձած է նաև մայրենի լեզու: Սակայն քանի մը գյուղերու մեջ հայերենը դեռ պահված է. ասոնք են Սթանոզ (էնկյուրիի արևմտյան կողմը), Սիվրի-Հիսար (անկե հարավ-արևմուտք), Նալլը իւան (Սթանոզի հյուսիսային արևմտյան կողմը) և քանի մը գյուղեր Յոզղատի քով: Ասոնց վրա տեղեկություններ կը պակսին: Սթանոզի լեզվին մասին քանի մը տեղեկություններ և փոքրիկ բնագիր մը կա: «Բիւրակն» մեջ (1899, էջ 670, 1900, էջ 233): Այս կտորները թեև բնավ բավական չեն հիշյալ տեղերու լեզվին ուսումնասիրության

11 Նույն տեղում, ՊՄԸ, էջ 103:

12 ՊՄԸ, էջ 152:

13 ՊՄԸ, էջ 146—147:

14 ՊՄԸ, էջ 147—148:

15 «Բիւրակն», 1898, էջ 822—823, 1899, էջ 278, 427, 799:

16 Հ. Աճառյան. Գավառական բառարան. Թիֆլիս, 1913: Այսուհետև՝ ԳԲ:

համար, բայց կը թվին ցուցնել, թե իրենք ալ Կիլիկիո ենթաբարբառները պիտի կազմեին (ընդգծումը մերն է՝ Ն. Մ.)»¹⁷ Իհարկե, Հ. Աճառյանի կասկածները տեղին էին, և հիշյալ երեք գաղթօջախների բարբառների «Կիլիկիո ենթաբարբառներ» համարելու վերաբերյալ եզրակացությունը ճիշտ չէր, քանի որ Կիլիկյան խմբի բարբառները՝ Զեյթունը, Հաջընը, Մարաշը, իրենց ձևաբանությամբ ու հատկապես հնչյունաբանությամբ խիստ հեռու են կանգնած հիշյալ բարբառներից։ Համոզվելու համար այս բանում բավական է հնչյունական մեկ (սակայն շատ կարևոր) օրենքի ստուգումն իսկ. «Չայնական փոփոխությանց մեջ ամենեւնի հատկանշականն ու Կիլիկիո մեջ տարածվածը ածայնին օ-ի վերածումն է շեշտի տակ»¹⁸։ Ստուգենք այս մեկ հատկանշական օրենքի գոյությունը Սիվրի-Հիսարում՝ համեմատության եզր ունենալով գրաբարը՝

Գրաբար	Հաջըն	Զեյթուն	Մարաշ	Սիվրի-Հիսար
հաց	հօց	հօց	հօց	հաց
շատ	շոդ	շոդ	շոդ	շատ
երթալ	իշդոլ	իյթօլ	ըրթոլ ¹⁹	էթալ

Ինչպես տեսնում ենք, Սիվրի-Հիսարը շատ հեռու է կանգնած Կիլիկյան բարբառներից և՛ ձայնավորների, և՛ բաղաձայնների հնչյունափոխությամբ։ Բարբառների քաջահմուտ Հ. Աճառյանի վրիպումը ոչ գիտականորեն հրատարակված նյութերի պատճառով էր, որոնց վրա հենվել էր նա, ինչպես հետագայում պարզվեց, նույնիսկ իր կազմած «Գավառական բառարան» իսկ անվտանգելի աղբյուր էր նման եզրահանգումների համար, քանի որ այնտեղ ամփոփված բառերը քաղվել էին այլևայլ ակունքներից և վերածվել գրաբարյան սկզբնաձևի, ինչպես տեղեկանում ենք հետևյալ տողերից. «...Յուրափանջյուր բառի համար հարկավոր է ընել համեմատական բնություն մը և այս բնությամբ վերականգնել նախաձևը»²⁰։ Այս հասկանալի պատճառով էլ «Գավառական բառարանում» բերված Սիվրի-Հիսարի բարբառի բառերից շատերը չեն համապատասխանում իրենց ճիշտ բարբառային արտասանությանը՝ «վերականգնված» (գրաբարյան տեսքով) լինելու պատճառով։ Բերենք մի քանի օրինակ այդ «շտկված»՝ բարբառի իրական ձևերից հեռացված բառերից, որոնք իրականում արտասանվում են այսպես՝

Սիվրի-Հիսարի բարբառում՝	Գավառական բառարանում՝
ախասկ	աղհացք
ախշինտէս	աղջիկտես
էքօիսկ	այգողք
զէննիք	զենլիք
խաշնէլ	խաշնել
մէնէլօքի	մեռելոգի
շէրիս	շեռք (կշեռք)
շէրիսէլ	շեռքել
պարրմպապ	պարոն պապ
տահտէղ/տատտէղ	տաքդեղ
անկաճտօրիս	ականջթոռք ²¹

17 Հ. Աճառյան. Հայ բարբառագիտություն. Մոսկվա—Նոր Նախիջևան, 1911, էջ 201, այսուհետև՝ ՀԲ, նաև նույնի՝ ԳԲ, էջ 21։

18 Հ. Աճառյան, ՀԲ, էջ 200։

19 Հ. Գաւառյան. Հաջընի բարբառը. Երևան, 1966, էջ 14—15։

20 Հ. Աճառյան. ԳԲ, էջ 9։

21 Հ. Աճառյան. ԳԲ, էջ 69, 77, 90, 31, 8, 454, 771, 826, 904, 10215, 811։

Սիվրի-Հիսարի գաղթօջախի հիմնադրումն էլ կիրիկյան պետականության անկման հետ կապելը թվում է անհիմն, ինչպես անհիմն էր այն կիրիկյան ենթադրաբառ համարելը: Զ. Աճառյանի անտիպ «Հայ գաղութների պատմությունը» հղում ունենալով Մ. Զամչյանի «Հայոց պատմությունը», ընդգծում է մի կարևոր կռիվ, այն է՝ կիրիկիո Օշին թագավորի 1316 թ. Ադանայում գումարել տված եկեղեցական ժողովին, ի թիվս այլ թեմերի ներկայացուցիչների, եղել է նաև «Լուսնատանդին» եպիսկոպոս Անկիրիոյ²²: Հետևաբար Անկյուրիայի տարածաշրջանում հայկական գաղթօջախների գոյությունը XIV դարում արդեն փաստ էր: Եկեղեցական երկրորդ ժողովին (1342) նույնպես ներկա էին՝ «Բասիլ եպիսկոպոս Անկիրիոյ և Խարսեղ աբխազիսկոպոս Իկոնիոյ»²³: Կարևոր է հիշատակել նաև Մեծոփեցու վկայությունը Նիկոսի (Նիյ-տե) քաղաքի տանուտեր Հակոբի գողության մեջ կասկածվելու պատճառով մահապաշտության ընդունելու և Սսի Կոնստանդին Ե կաթողիկոսի կողմից նզովքի ենթարկվելու մասին պատմությունը²⁴, Ըստ Բադեոս Սեբաստացու, երկու դար անց օսմանյան Սուլեյման թագավորի կողմից 1534 թ. այս վայրերն են բերվում մեծաքանակ հայ գաղթականներ Երևանից ու Նախիջևանից, որի հիման վրա Զ. Աճառյանը գրում է. «Այս գերիները բնակվեցին էնկյուրի, Քեոքահա, Նալլը խան և շրջակայքը: Գաղթականության մի խումբ էլ բռնավորների երկյուղից քաշվեց Գաղատիայից 6 ժամ հեռու գտնված երկու շոր և ապառաժոտ լեռների միջև գտնվող Սթանոզ գյուղը, ուր իր գոյությունը մինչև վերջն էլ շարունակեց: Մի ուրիշ խումբ էլ գնաց Սիվրի-Հիսարից մի քառորդ հեռու Խրիստիան Քեոյի (Քրիստոսից գյուղ) հաստատվեց, որտեղից հետո պահպանված է նույն շրջանի հայոց մեջ, որոնք իրենց պարսկաստանցի հայ են անվանում»²⁵:

Այս տողերից կարելի է եզրակացնել, որ Զ. Աճառյանը, հենվելով պատմական տեղեկությունների, մասամբ էլ սիվրիհիսարցիների բանավոր ավանդությունների վրա, փաստորեն հերքում է իր իսկ հայտնած այն կարծիքը, թե այս վայրերի բարբառները «կիրիկյան» են: Սակայն, ինչպես Զ. Աճառյանի բերած վկայություններից է պարզվում, պարսկահայերից և կիրիկահայերից էլ առաջ Անկյուրիո թեմում առկա էին բազմաթիվ հայ գաղթօջախներ, որոնց այդտեղ կարող էին հայտնվել ավելի վաղ՝ XI դարում, Բագրատունյաց հարստության անկումից հետո, երբ Անիից, ապա նաև Վասպուրականից և Հայաստանի այլևայլ վայրերից սկսվեց արտահոսքը դեպի Բյուզանդիա և ավելի հեռուն: Մեր կարծիքով, Սիվրի-Հիսարի գաղթօջախում մինչև պարսկահայերի ու կիրիկյան և այլ գաղթականությունների հայտնվելը, Անիի շրջակայքից ելած մի գաղթականություն է հանգրվանել, որը և թողել է իր բարբառի ազդեցությունը գաղութի լեզվի վրա: Սիվրի-Հիսարի բարբառը իր ձևաբանական և հնչյունաբանական առանձնահատկություններով հայերենի մյուս բարբառների մեջ ավելի մոտ է կանգնած նոր Նախիջևանի բարբառին: Սակայն ի՞նչ կապ կարող է լինել տարածության միմյանցից բավական հեռու այդ բարբառների միջև: Ինչպես հայտնի է, Ղրիմի և նոր Նախիջևանի հայերը իրենց համարում էին Անիից գաղթածներ: Նույնպես կարծիք էլ հաճախ սիվրիհիսարցիներն էին արտահայտում՝ վկայակոչելով ինքնանվանարկիչ «Անիի էտլվի տուռէն փախողէր» պիտակը, որով զինաթափում էին միմյանց հետ վիճաբանելիս: Դժվար էր հենվել այս փաստի վրա, եթե լեզվաբանական փաստերը չհաստատեին այդ ասույթի պատմական հիմքերը: Չնայած ժամանակամիջոցի մեծ անջրպետին Սիվրի-Հիսարի և Ղրիմի (նոր Նախիջևանի)

22 Մ. Զամչյան. Պատմություն հայոց. հ. 9, Վենետիկ, 1784, էջ 341:

23 Նույն տեղում, էջ 341:

24 Զ. Աճառյան. Հայ գաղութների պատմություն, անտիպ, էջ 1—2: (Զ. Աճառյանի անձնական արխիվ):

25 Նույն տեղում:

բարբառները պահպանել են բազմաթիվ զուգաբանություններ, ընդհանրություններ, որոնք հատուկ են միայն այս երկու բարբառներին և չենք հանգիստում այլ բարբառներում, որով հաստատվում է նրանց երբեմնի հարևանների լինելու վարկածը կամ առնվազն մոտ տարածքներից լինելու իրողությունը: Որպեսզի ասվածը միայն հայտարարության արժեք չունենա, ստորև բերենք երկու բարբառներում նկատվող զուգաբանություններից ու ընդհանրություններից հիմնականները՝

- ա) Ն ունեցող (աճ,ն) բույերը ներկայում ենթարկվում են -ի(լ) կրավորակերպ խոնարհման, ինչպես՝ առնիմ, կրտնիմ, տանիմ և այլն, իսկ ըզական, պայմանական ապառնիում՝ ուլ, ինչպես՝ կսռնում, կրտանում, կրկընում և այլն:
- բ) Նվազագույնի են հասցված երկու բարբառների հոգնակերտները. Ն. Նախիջևանում՝ -էր, նէր, Սիվրի-Հիսարում՝ միայն -էր:
- գ) Ժխտական խոնարհման ժամանակ երկու բարբառներում էլ ներկա է կազմվում անորոշ դերբայի օգնությամբ՝
Նոր Նախիջևան՝ մէզի չի քալ (մեզ մոտ չի գալիս)
Սիվրի-Հիսար՝ մէզի շուքալ (մեզ մոտ չի գալիս)
- դ) Բառապաշարում կան բազմաթիվ ընդհանրություններ, որոնք կազմված են միևնույն սկզբունքով. դրանք ցուցական դերանուններն են՝
Նոր Նախիջևան՝ վուտէխ, ասխատար, ատխատար,
Սիվրի-Հիսար՝ վուտոխ, ասխատար, ատխատար
- ե) Կրկնավոր անիսկական բարդություններ անկատար դերբայից՝
Նոր Նախիջևան՝ խոււտում-ցունծում
Սիվրի-Հիսար՝ խոււտում-ցունծում
- զ) Երկու բարբառներն էլ ունեն պայթական բաղաձայնների երկաստիճան ձայնեղագույն համակարգ:
- է) Մի շարք հնչյունական անցումներ, ինչպես Բ-Ղ հատուկ են այս բարբառներին.
Նոր Նախիջևան՝ երեբ-թէբ, հարսանիբ-հաշնիբ
Սիվրի-Հիսար՝ երեբ-շէբ, հարսանիբ-հաշնիբ՝ նաև՝ հաշնախպայ, հաշնաբույ
- ը) Կը եղանակիչի շնչեղ-խլացում (կ-բ) ձայնեղներին և ձայնավորներին նախորդելիս՝
Նոր Նախիջևան՝ կու գաս-բուքաս, կու ասէ-բքսէ
Սիվրի-Հիսար՝ կու գաս-բուքաս, կու ասէ-բքսէ և այլն:

Այս ընդհանրությունները ինչ որ բան ասում են երկու բարբառների միևնույն միջավայրից ծագելու մասին, սակայն, դեռևս բավարար չեն որոշակի «արևելյան» որևէ բարբառի հետ նույնացնելու համար, առավել ևս, որ նոր գաղթօջախներում թե՛ Նոր Նախիջևանը, թե՛ Սիվրի-Հիսարը ներկայում պատկանում են «արևմտյան» կը խմբակցության բարբառներին:

Բնականաբար, Սիվրի-Հիսարի բարբառի պես մի յուրօրինակ բարբառ չէր կարող դուրս մնալ մեծ լեզվաբանի ու բարբառագետի տեսադաշտից: Հ. Աճառյանը զանազան առիթներով անդրադարձել է Սիվրի-Հիսարի բարբառի բառապաշարին, ածականների նախամասնիկավոր գերադրական կազմելու եղանակին, զոյականների հոգնակի թվի կազմությանը, դերանունների հոլովմանը և ծագման հարցերին²⁸: Սակայն հրապարակի վրա եղած նյութերի սղություն և մեծ մասի ոչ հավաստի լինելու (ոչ ճիշտ գիտական տառադարձություն) պատճառով Հ. Աճառյանը հնարավորություն չի ունեցել եզրակացություններ անել բարբառի պայթական-բաղաձայնական համակարգի

28 Տե՛ս Հ. Աճառյան. Հայ բարբառագիտություն, Գավառական բառարան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. I էջ 114, 120, 457, հ. 3, էջ 775, 817:

վերաբերյալ, մինչդեռ Սիվրի-Հիսարի բարբառի ոչ նվազ հետաքրքրական կողմերից մեկն էլ նրա պայթականների համակարգն է:

Ի տարբերություն գրաբարի և արդի հայերենի, Սիվրի-Հիսարի բարբառը ձայնեղ պայթականները արտասանում է ինչ խլացրած, որով ասես թե դրանք հավասարվում են խուլ պայթականներին և վերանում է խուլ-ձայնեղ հակադրությունը: Նման դեպքերում, սովորաբար բարբառը համարվում է երկաստիճան ձայնեղադուրկ պայթականների համակարգ ունեցող: Այս հարցի մասին հայ բարբառագետները առանձին առիթներով իրենց տեսակետներն են արտահայտել²⁷: Ճիշտ կլինե՞ր արդյոք Սիվրի-Հիսարի բարբառը համարել երկաստիճան ձայնեղադուրկ պայթականների համակարգ ունեցող բարբառ, երբ այս բարբառում խուլ դարձած ձայնեղները ոչ թե նույնանում են գրաբարյան խուլների հետ կամ հավասարվում նրանց, այլ ձայնեղները սովորականից ավելի նվազ հայումով են արտասանվում և չեն շփոթվում բուն խուլների հետ՝ ասես պահպանելով հայերենի պայթականների եռանդամ հակադրությունը: Մեզ թվում է, որ այս երևույթը նկատվում է հայերենի այլ բարբառների մեջ նույնպես, որը կարիք ունի փորձառական հատուկ հետազոտությունների և այդ պատճառով էլ արժանացել է բարբառագետների և լեզվաբանների ուշադրությանը:

Այս հարցը հատուկ քննության է ենթարկում է. Աղայանը իր «Գրաբարի քերականության» մեջ, ուր գրում է. «Յավոք մեր բարբառների հնչույթային համակարգը դեռևս ուսումնասիրված չէ, և ներկայացրած եռանդամ հակադրությունը ձայնեղագուրկ (ընդգծումը իմն է—Ն. Մ.) բարբառների համաբար անվիճելի է միայն մի քանիսի տվյալներով, իսկ մյուսները դեռևս կարո՞տ են հնչույթաբանական ճշգրիտ վերլուծությունների: Այնուամենայնիվ, այդ մի քանի բարբառների տվյալներն էլ բավական են մի կողմից մեր ասածը ավելի հավանական համարելու, իսկ մյուս կողմից, որ տվյալ դեպքում ավելի կարևոր է, բացատրելու, թե, ինչպես է, որ ձայնեղները պարզ խուլների վերածվելով շեն շփոթվել հին պարզ խուլների հետ և պահպանվել է հնչույթաբանական «հավասարակշռությունը»: Այնպիսի ակնհայտ հակադրությունները, ինչպիսիք են՝ տա և «դաս» — տա և ըղձական տալ բայի 2-րդ դեմքը, տա և «դուր» — տուր, կա՞ր «գար» — կար, կա՞լ «գալ» — կալ «կալիելու տեղ» և այլն, լավագույնս հաստատում են մեր ասածը, նշանակում է, որ այս բարբառներում ունենք պայթականների եռանդամ համակարգ» (ընդգծումը իմն է—Ն. Մ.)²⁸, նմանօրինակ երևույթի ընթացքը պրոֆ. է. Աղայանը պատճառաբանում է հետևյալ կերպ. «Այս երևույթը պատմականորեն շատ հեշտ է բացատրվում. հայերենի ձայնեղ պայթականներն առհասարակ շատ ավելի թույլ պայթյունով են արտասանվում, քան խուլները»²⁹:

Հայերենի այդպիսի՝ եռաշարք պայթաբաղաձայնական համակարգ ունեցող բարբառների մեջ դասական ներկայացուցիչ կարող է համարվել Սիվրի-Հիսարի բարբառը, ուր գրաբարյան ձայնեղները բառասկզբին, այլև բառամիջում և բառավերջում, հնչում են թույլ խլացումով: Ավելին, այս բարբառում, ինչպես նաև Նոր Նախիջևանում, խլացված են հնչում նաև փոխառյալ բառերի ձայնեղները³⁰: Ձայնեղների խլացման հետևանքով (բառասկզբին) նմանա-

27 է. Աղայան. Գրաբարի քերականություն, հ. 1, գիրք II, Երևան, 1964, էջ 151—152:

28 Տե՛ս Մատթեոս Հաճյան, Վ. Հուլիսյան. Հուլամատյան Խոտորչուրի. Վիճենա, 1964, էջ 390—391, Թ. Դանիելյան. Մալաթիայի բարբառը. Երևան, 1967, էջ 22, Գ. Ջահուկյան. Հայ բարբառների բաղաձայնական համակարգի ժազման հարցի շուրջը. — «Вопросы филологии», 1960, № 6.

29 է. Աղայան. նշվ. աշխ., էջ 150:

30 Նույն երևույթը նկատվում է նաև Նոր Նախիջևանի բարբառում, ուր թուրք-թաթարերեն, ռուսերեն, իտալերեն փոխառությունների ձայնեղները արտասանվում են որպես խուլներ: Տե՛ս Բ. Պատկանյանի երկերի ժողովածուների 3-րդ, 4-րդ հատորները, Խ. Փորթալյանի Նոր

հունչ դարձած բառերը երբեք չեն շփոթվում, օրինակ՝ դու երկրորդ դեմքի դերանունը, որ բարբառումս արտասանվում է տուն, սակայն չի շփոթվում տուն բառի հետ՝ «Տուն ի՞նչ կիպի ուշախ էս, տուն էկածիտ կիպի ուճիկ կուտէս»։ (Դու ի՞նչ ձևի երեխա ես, տուն գալուդ պես սուջուխ ես ուտում)։

Ինչպես տեսնում ենք, բարբառումս առկա է խլացած ձայնեղների և բուն գրաբարյան խուլերի նվազագույն հակադրությունը։ Կարելի է բերել նաև այլ ձայնեղ պայթականների խլացման օրինակներ՝ ծէր «ծերունի», և ծէր «ծեր», կիր «գիր» և կիր «կիր» և այլն։

Ինչպես Հ. Աճառյանն է ընդգծում, «Բարբառի էությունը կազմող տարբեր ե են՝ ձայնաբանությունն ու ֆեռականությունը»⁸¹։ Ըստ հնչյունաբանական դասակարգման, ինչպես ցույց տրվեց, այն սլատկանում է ձայնեղազուրկ երկաստիճան պայթականների համակարգ ունեցող բարբառների թվին, իսկ ըստ ձևաբանական դասակարգման, որի հիմքում ներկայի կազմությունն է, այն ներկայանում է որպես ունիկալ մի բարբառ՝ իր երեք շարունակականների կերտող մասնիկներով։ Այդ երեք շարունակական կերտող բառերն են՝ կա, կէ, նամ, էրէր։

Ինչպես ցույց տրվեց վերևում, Սիվրի-Հիսարի բարբառը թեկուզ որոշ վերապահությամբ «կիլիկյան» համարելը հիմքերից զուրկ էր։ Գ. Զահուկյանի կողմից նրա՝ բարբառների բազմահատկանիշ դասակարգման հիմունքներով այն «միջբարբառ» կամ Ամասիա-Կյուրինի «ենթաբարբառ»⁸² դիտելը նույնպես զուրկ է հիմքերից։ Այս վերջին եզրակացությունը Սիվրի-Հիսարի բարբառի վերաբերյալ մասամբ արդյունք է Հ. Աճառյանի տեսակետին հետևելու, մասամբ էլ նոր ինֆորմացիայի բացակայության։ Ըստ հայ բարբառագետների սահմանած կանոնների, Սիվրի-Հիսարի բարբառը լիովին իրավունք ունի համարվելու ինֆուռույն՝ բոլոր կտրվածքներով, որոնք թվարկում ենք ստորև՝

1. Հայերենի շարունակական ներկա ունեցող բարբառների մեջ Սիվրի-Հիսարը միակն է, որ ունի շարունակական ներկա կազմող երեք մասնիկ-բայեր, որոնց մասին արդեն խոսվել է։ Հիմնականում շարունակական ներկան գրսևորվում է կա բառ-մասնիկի օգնությամբ, ինչպես օրինակ՝ կէթամ կառախալիս տունու (Գնում եմ եղբորս տունը հիմա)։ Սակայն զուգահեռաբար, թեև նվազ հաճախականությամբ, օգտագործվում են նաև մյուս բառերը։ Այսպես՝ Տէսա, կուֆան կիկէնան (Տեսա, գալիս եմ հիմա)⁸³, Երրորդը օժանդակ բայի անցյալի եզակի երրորդ դեմքն է՝ էր-ը, որը կարող է կրկնվել երբեմն մի քանի անգամ, ինչպես օր. Կէթամ էր (կամ կէթամ էրէր) անընդմեջ տունու (Գնում եմ մորս տունը հիմա)։ Հայերենի մյուս բարբառներում այս կերպ շարունակական ներկա կազմող այլ բարբառներ չեն հանդիպում։ Միայն էր օժանդակ բայ-մասնիկի օգնությամբ շարունակական է նկատվում Տրապիզոնի բարբառում, այն էլ առանց կրկնության⁸⁴։

2. Ինչպես հայտնի է, հայերենի կը խմբակցության բարբառներում ապառնին կազմվում է պիտի բառի օգնությամբ, որը արևելյան՝ ում խըմբակցության բարբառներում հարկադրականի եղանակիչն է։ Սիվրի-Հիսարի բարբառը այստեղ ևս առանձնանում է իր ապառնի կազմելու եղանակով։ Այն

Նախիջևանի հայ ժողովրդական բանահյուսությունը. Երևան, 1965։ Ի դեպ, Ղրիմի կամ Նոր Նախիջևանի բարբառը ներկայացնող հինգ գյուղերից (Զալթըր, Թոփթի, Սուլթան Սալա, Մեծ Սալա, Նեսվիհա) երկուսը խոսում էին եռաստիճան և մնացյալը՝ երկաստիճան պայթական բաղաձայնական սխտեմով։ Երկաստիճան ձայնեղազուրկ պայթական բաղաձայնական համակարգով են գրի առնված Ռ. Պատկանյանի բարբառային ստեղծագործությունները։

81 Հ. Աճառյան, ՀՀՊ, հ. 2, էջ 125։

82 Տե՛ս Գ. Զահուկյան. Ներածություն հայ բարբառագիտության, էջ 133։

83 ՊՄՀ, էջ 503։

84 Հ. Աճառյան. ՀՀՊ, հ. 2, էջ 344, ՀԲ, էջ 179։ Ավելի հավանական է թվում էր-ի ծագումը եղեր-էղեր-էր բնաշրջությամբ։

ապականտար դերբայի -ելու/-ալու վերջավորությունն ու ձայնավորը փոխարինում է ևս մեկ լ-ով, ինչպես օրինակ՝ վազելլ էմ, վազելլ էս, վազելլ է (վազելու եմ, վազելու ես, վազելու է)։

3. Հրամայական եղանակի արգելականը (ժխտականը) նույնպես կազմվում է անորոշ դերբայի և նախադաս մու, մ արգելական մասնիկների օգնությամբ՝ մէթալ (մի գնա), մէնէլ (մի անի), մու քըշտէլ (մի խփիր) և այլն։

4. Անորոշ դերբայի օգնությամբ դրսևորվում է նաև ժխտական խոնարհման ներկա երրորդ դեմքը, ինչպես օր.՝ Ախսաբէթը մէզի չուֆալ (Եղիսաբեթը մեզ մոտ չի գալիս), Խաթմայէրս չըխօսիլ, չուտէլ, պան ա չէնէլ (Մեր սկեսորը չի խոսում, չի ուտում, գործ էլ չի անում)։

5. Վաղակատարը դրսևորվում է հարակատար դերբայի միջոցով, առանց օժանդակ բայի՝ Ախսաբէթէնց Տիրօհին ուռուբան փօխած (Եղիսաբեթենց Տիրուհին շրջագոգեստը փոխել է), Պակղալն ա հասկըցաւ, էտէվէն դօրացած, կանչած, ամօթանք տուրած, փարան յէտ տուրած (խանութպանն էլ հասկացել է, ետևից գոռացել է, կանչել է, ամոթանք է տվել, դրամը ետ է տվել)։

6. Հին Հայերենի բազմաթիվ հոգնակերտներից հրաժարվելով արդի գրական լեզուն, պահել է միայն երեքը՝ եր, -ներ, ք (միավանկ, բազմավանկ և տեղացի նշանակող բառերի համար), մինչդեռ Սիվրի-Հիսարի բարբառում այս բնաշրջությունը իր վերջնակետին է հասել, և մնացել է միայն մեկ հոգնակերտ՝ -էր -ը, թե՛ միավանկ, թե՛ բազմավանկ, թե՛ տեղացի նշանակող բառերի համար, ինչպես օրինակ՝ հավ-հավէր, տուն-տունէր, համալախ-համալախէր, կատու-կատույէր, հարսախչին-հարսախչինէր, խաթմայ-խաթմայէր, պարբմապա-պարբմապաէր, տունէցի-տունէցիյէր, ֆաղբըցի-ֆաղբըցիյէր և այլն։ Միայն մեկ ձևությամբ հոգնակի կազմելու մենաշնորհը նույնպես պատկանում է Սիվրի-Հիսարին։

7. Նվազագույնի է հասցված Սիվրի-Հիսարի բարբառում նաև հոլովիչների թիվը, այսինքն՝ մեկ հոլովիչ եզակի թվի և մեկ՝ հոգնակի թվի գոյականների համար. գոյականներն անխտիր ենթարկվում են եզակի թվում «ի», հոգնակի թվում՝ «ու» հոլովման, ինչպես օր.՝ ճուր-ճուրի, տուն-տունի, ախալա-ախալի, քուլ-քուլի, կէսօր-կէսօրի, տարի-տարիյի, և այլն, հոգն.՝ ճուրէրու, տունէրու, ախալաւէրու, քուլէրու, կէսօրէրու, տարիյէրու և այլն։ Գրական լեզվում հոլովիչների թիվը յոթն է։

8. Բազմաթիվ հայերեն բառեր պահպանվել են միայն Սիվրի-Հիսարի բարբառում, որոնք այլուրեք չկան, ինչպես նաև տվյալ իմաստով գիտեմիայն այս բարբառը, որ հայտնի չեն ո՛չ գրական լեզվին, ո՛չ գրաբարին կամ այլ բարբառի։

Ի մի բերելով Սիվրի-Հիսարի բարբառի հնչյունաբանական, ձևաբանական առանձնահատկությունները և համադրելով դրանք նոր նախիջևանի և կիրիկյան խմբի բարբառների հետ, մենք գալիս ենք այն եզրակացության, որ այն նման չէ ոչ մեկ և ոչ էլ մյուս բարբառներին. այն բազմաթիվ կետերում առանձնանում է վերոհիշյալներից և հայերենի մյուս բարբառներից միայն իրեն հատուկ հատկանիշներով։ Ինչ վերաբերում է նոր նախիջևանի բարբառի հետ ունեցած մեր հիշատակած նմանություններին, որոնցով նրանք պետք է ենթադրվեին որպես Անիից կամ նրա շրջակայքից ծագող բարբառներ, ապա այս գուգաբանությունները, որոնք թեև հանդես են գալիս բառապաշարի, ձևաբանության և հնչյունաբանական մակարդակներում, սակայն չեն կարող հիմք ծառայել նման վարկածի հաստատման համար հենց այն պատճառով, որ բուն Անիի բարբառը մեզ համար մնում է անծանոթ կամ գոնե Միջին դարերի վիճակի չիմացության պատճառով, իսկ այսօրվա Շիրակի (Գյումրիի), Կարնո բարբառները միայն ենթադրաբար կարող են Անիի բարբառի ծառանգորդներ դիտվել, սակայն այս դեպքում էլ չեն նկատվում գուգաբանություններ Կարնո (Գյումրիի) բարբառի և նոր նախիջևանի ու Սիվրի-Հիսարի բարբառների միջև։ Միաժամանակ, կամ մյուս կողմից էլ, չի կարելի ուշադրություն շարժել նոր նախիջևանի և Սիվրի-Հիսարի բարբառների միջև բերված

զուգաբանություններին, որոնք շունեն այլ բարբառներ (կամ հիմնականում շունեն, բացառյալ մեկ-երկու դիպվածի)։ դրանք խոսում են այս երկու բարբառների իսկապես միևնույն տարածաշրջանից լինելու մասին, որը, սակայն, նույնությունամբ չէր կարող պահպանվել տարբեր վայրերում նրանց հաստատվելու և տարբեր բարբառների հետ շփվելու պատճառով։ Սիվրի-Հիսարի բարբառը, ինչպես Անատոլիայում դոմիլոդ հայ գաղթությաններից շատերի բարբառները, նոր միջավայրում ձևավորված բարբառներից մեկն է, որի մեջ դեռևս զգացվում են հնչյունաբանական, ձևաբանական երկակի օրինաչափություններ, որոնք հարատևում են դեռևս զուգահեռաբար. նշենք դրանցից մի քանիսը՝

ա) որոշ բառերի արտասանության մեջ նկատվում են տարբերություններ, որը կարելի է բացատրել միայն որպես տարբեր բարբառների խաչավորման արդյունք. դա հատկապես նկատվում է խուլ կ-ով սկսվող բառերի արտասանության ժամանակ, ումանք կ-ն փոխարինում են ղ-ով, այսպես՝

կանչել-ղանչել, կարմիր-ղամուր, կրծել-ղրծել, կրոնակ-ղրոնակ, կարճ-ղարճ, կրավարար-ղրավարար, կրավրտիլ-ղրավրտել, կրճըտել-ղրճըտել, կտրտել-ղրտըխտել, կրոիվ-ղրրիվ,

բ) Ձայնեղները սովորաբար խլացնում է բարբառը, սակայն կան բազմաթիվ դեպքեր դրանց շնչեղ-խլացման, որը գրական լեզվի ազդեցությամբ բացատրելի թերևս համոզիչ չէ բոլոր դեպքերում՝

պընութուն-փընութուն, տըրպոց-թըրբոց, տրրպատուն-թըրպատուն, կանծ-բանծ, կօրծ-բօրծ, ճօրթեն-չօրթեն, ճուլակ-չուլհակ, ճօրի-չօրի և այլն։

գ) Երկվություն է նկատվում նաև ձևաբանական մակարդակում. այսպես՝ օժանդակ բայի հոգնակին լինում է էյինգ-էյի-էյինգ կամ էյանգ-էյաֆ/էյիֆ-էյին և ոչ միայն օժանդակ, այլև առհասարակ մյուս բայերի հոգնակի առաջին և մասամբ երկրորդ դեմքերը՝ կառնէյինգ-կառնէյիֆ-կառնէյինգ, կառնէյանգ-կառնէյաֆ/կառնէյիֆ-կառնէյինգ

դ) բառակազմության ասպարեզում նկատվում են երկակի-եռակի ձևեր, ինչպես՝ ածընակ, ածընակ, հանցնակ, հասնակ, որոնցից մի մասը արդյունք է բնաշրջության (ինչպես ինֆորմատորներն էին ասում. «հիները ածընակ քսէյին»), իսկ մյուսները՝ ֆօլը-խէլը-մօտու, կէսար-պարըմ-պալ, կէսուր-խաթմայ և այլն, տարբեր բարբառների նախասիրած ձևերի մնացորդներ կամ ազդեցություններ են։

ԸՍԹԱՆՕՋՑԻ ԷՐՈՒՆ ԽՔԼՔՎՈՐԷՐԸ

Ըսթանօզցիերեն մէ խէլքվօր մարթ չէած։ Մէ մաթալ ըսիմ տա, տուք ա իմցէք անօնց իշ խէլքվօր ըլլալը։

Ըսթանօզցիին մէյին կօվը կըմընու ղերվէմինը, կըտէսնու, քի կարասին մէլը խրմէլիք կա։ Կուլօխը կըխօյթէ կարասին մէլը, կըկըծէ խըմլը։ Խըմլէն վէրը կուլօխը տուրս հանէլու տէպէլէշմիշ կըլլա կար։ Տէպէլէշմիշ ըլլալիքէն տէրը անօ քօվ էկած։ Տէրն ա չապալամմիշ էղած, ամմա կարասը պըղտիկ էղած էլլ է, ասօ համար ֆայտա չըտուրած։ Ըսթանօզցիերը կըթօղվրվին, կըլարըրվին, ամմա կօվին կուլօխը կարասէն տուս շուբալ։

Ըսթանօզցիերը շատ աուշու՝ միշ-տաշընմիշ կըլլան, քըսէն քի՝ կօվին կուլօխը կըտըրինք նա, կարասը կէլլէ։

Կօվին կուլօխը կըկըտըրէն, ամմա աս անքամ ալ կօվին կուլօխը կարասէն չէլլար կար։ Խէլքվօրէրը քըսէն քի, կարասը չըղօյտուրէնօ, նա կօվին կուլօխը տուս չէլլար։ Իշտէ Ատծընակ ա կէնէն։ Կարասը կըղօյտուրէն, քի կուլօխը տուս էլլա։ Ամմա իշ ֆայտա, կօվն ա վէնէցին, կարասն ա ղօյտուրէցին։

Ասաց՝ Կոստանյան Անդրանիկ Սահաբանի